ՀԱՄԱՀԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Առաջիկայ յոբելեանական հանդէսների առիթով հոկտեմբերի 14-ին ցերեկուայ ժամը 2½-ին Թիֆլիսի ժողովարանի ձմերային շէնքում տեղի կունենայ բանկէտ։ Մասնակցողները վճարում են 5 ռուբ., իսկ ծխական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիները՝ 3 ռուբլի։

—

Յոբելեանական տօնախմբութիւնների ծրագիր կազմելու համար Թիֆլիսի թեմի առաջնորդարանում խորհրդակցութեան են հրաւիրուած զանազան ընկերութիւնների և հաստատութիւնների հետեւեալ անձինք. Մ. Արամեան, բժ. Բ. Աղասարեան, Ա. Այվազեան, Արմէնեան, Յ. Աղարաբ, Ս Աբովեան, Բ. Առաքելեան, Ա. Աբեղեան, Բարսեղեան, Գ. Բաշինջաղեան, բժ. Ա. Զարգարեան, Յովհ. Թումանեան, Ս. Լիսիցեան, Ա. Խատիսեան, Խ. Խաչատրեան, Յ. Խունունց, Ս. Կաֆեան, Մ. Մարտիրոսեան, Ս. Մալխասեան, տիկ. Հ. Մարտիրոսեան, Ա. Միլեան Ս. Յարութիւնեան, Ն. Յարոյ, Ռ. Յովհաննիսեան, Ա. Նազարեան, Ս. Սուլխանեան, Յովհ. Տէր-Միրաքեան, Մ. Քալանթարեան, Յ. Քոչարեան, տիկ. Շ. Յովհաննիսեան, Դ. Դոլուխանեան, Գիւտ ա. ք. Ազանեան, Վալադեան։

—

Թիֆլիսի ծխական դպրոցների ուսուցիչներից կազմուած է մի մասնախումբ, որը տանելու է բոլոր աշակերտներին յոբելեանի առիթով հոկտեմբերի 14-ին Արտիստիկ. թատրոնում լինելիք ներկայացմանը («Սահակ և Մեսրոպ» Ա. Արմէնեանի)։

—

Երէկ երեկոյեան նշանակուած էր Թիֆլիսի ծխ. դպրոցների ուսուցիչների և հոգաբարձուների ժողով՝ էջմիածնի

նում կատարելիք յոբելեանական հանդէսներին ներկայ գտնելու համար ներկայացուցիչ ընտրելու։

—

Արդէն տպած և ցրուած են Թիֆլիսի թեմի դպրոցներին և աշակերտներին բաժանելու համար Ս. Սահակի և Ս. Մեսրոպի մեծադիր պատկերները։

—

Թիֆլիսի Երաժշտական ընկերութեան վարչութիւնը որոշել է ամբողջ կազմով ներկայ գտնուել Թիֆլիսում լինելիք յոբելեանական հանդէսներին և երաժշտական անդրանիկ հրատարակութիւնը նուիրել յոբելեանին։ Ընկերութեան կողմից էջմիածնում կատարելիք յոբելեանական հանդէսներին ներկայ լինելու համար ներկայացուցիչ է ընտրուած երաժշտագէտ Գ. վարդ. Զէօրեքչեանը։

—

ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

Գրական ֆոնդի օգտին խմբագրութիւնս ստացաւ Կրասնովոդսկից՝ պ. Նիկոլայ Մինասեանից 3 ր., որ հաւաքուած է պ. Գէորգ Պապովեանի տանը մի հաւեստ ընթրիքի ժամանակ։

Այս գումարը աւելացնելով նոյն նըպատակով խմբագրութեանս մէջ ստացուած նախկին գումարի հետ, ներկայումս ունենք 103 ռուբլի։

—

Ներկայումս Թիֆլիսում գտնուող պ. Արամ Բաֆֆին նշանակուած է պատգամաւոր Լոնդոնի Հայ Միացեալ Ընկերութեան և հայ գաղութի կողմից մասնակցելու Համազգային տօնախմբութեանը Էջմիածնում։

—

Երէկ հաղորդել էինք այն մասին, թէ ինչ ձևով պէտք է Կովկ. Հայոց Բարեգ. ընկերութիւնը մասնակցի առաջիկայ յոբելեանական տօներին։ Այդ գրութեան մէջ թիւրիմացութեամբ բաց էր թողնուած հետևեալը. Խորհուրդը որոշել է նաև Աւ. Պողոսեան ֆոնդով հրատարակուած գրքերը յոբելեանի առթիւ հանրամատչելի գներով տարածել հասարակութեան մէջ և 25 օրինակ էլ նէր ուղարկել Գէորգեան ճեմարանի բարձր դասարանի աշակերտների համար։

—

Բագում հոկտեմբերի 12-ին, շաբաթ օրը, հայոց եկ.-ծխ. դպրոցներում սովորական պարապմունքներ չեն լինիլ, այլ ուսուցիչները իրենց դասարաններում կբացատրեն աշակերտաշակերտուհիներին հայոց գրերի գիւտի և տպագրութեան նշանակութիւնը։

—

Ներկայումս Բագումն է գտնուում Շամախու թեմի առաջնորդ Ասանիա արքեպիսկոպոսը, որը, տեղական թերթերի ասելով, մտադիր է հանգանակութիւն բանալ դպրոցական ֆոնդի համար։